ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
HEAD OF STAFF

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 52 53 17, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: headofstaff@edu.am,
www.edu.am

N 04/23/1639-16 «29» 02 2016թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
Լիանա Դոյդոյանին

Հարգելի Լիանա Դոյդոյան,

Ի պատասխան ԿԳՆ հասցեագրված 23.02.2016թ. 268-3 գրության՝ տեղեկացնում ենք.

1.2016թ. հունվարի 1-ից մինչև փետրվարի 25-ն ընկած ժամանակահատվածում ԿԳՆ info@edu.am էլեկտրոնային հասցեով ստացվել է 51 էլեկտրոնային հարցում:

2. Գրավոր պատասխանվել է 51 էլեկտրոնային հարցման: ԿԳ նախարարությունն ունի տեղեկատու հեռախոս/ 010-52-73-43/, որի միջոցով տվյալ ժամանակահատվածում ստացվել է շուրջ 500 հարցում, որոնց տրվել են բանավոր պատասխաններ:

3. Կայքի «Հետադարձ կապը» հնարավորություն է տալիս առցանց հարցումներ ուղարկել/ հղում՝ http://edu.am/index.php?topMenu=11&menu1=-1/

4. Կայքն ունի «Հաճախակի տրվող հարցեր» բաժինը, որը չի թարմացվել տեխնիկական խնդիրների պատճառով: Նոր կայքը փորձարկման փուլում է: Գործարկումից հետո համապատասխան բաժինը կթարմացվի:/ Հղում՝ http://edu.am/index.php?topMenu=12&menu1=-1/

Հունվար-փետրվար ամիսներին ստացված հարցումները հիմնականում վերաբերում էին ուսման վարձի զեղչին, վերջին շրջանում գրիպի հետ կապված՝ դպրոցական արձակուրդների երկարաձգմանը, միասնական քննություններին, միջպետական համաձայնագրի շրջանակում օտարերկրյա բուհեր ընդունելության հետ կապված հարցերին:

Աշխատակազմի ղեկավարի
պարտականությունները կատարող Ն. Հարությունյան

Կատ.՝ Յ. Միրզախանյան
Հեռ. 52-73-43